



Ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրություն (ԿԱՍԿՈ)

Ապահովագրեք Ձեզ պատահարներից մեր օգնությամբ¹

Ապահովագրվող ռիսկերի փաթեթ

Ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրության փաթեթը (ԿԱՍԿՈ) ներառում է հետևյալ ռիսկերը՝

Ավտոմեքենայի ֆիզիկական վնաս, այդ թվում՝

ճանապարհատրանսպորտային պատահարի կամ այլ արտաքին ազդեցության հետևանքով, հրդեհի, երրորդ անձանց անօրինական գործողությունների հետևանքով, այդ թվում՝ գողություն, կողոպուտ, առևանգում:

Ապահովագրական ծածկույթի տարեկան դրույքաչափեր

- ü 2.5%՝ ռիսկերի փաթեթի համար
- ü Ավտոմեքենայի ապահովագրությունն անհրաժեշտ է կատարել ավտոմեքենայի ամբողջ շուկայական արժեքի չափով:

Չհատուցվող գումարներ

Գործում են հետևյալ ոչ պայմանական չհատուցվող գումարները

- ü Ապահովագրական գումարի 1%, ոչ պակաս քան 50,000 ՀՀ դրամ
- ü Եթե դեպքի պահին ապահովագրված ավտոտրանսպորտային միջոցը վարել է 2-3 տարվա վարորդական փորձ ունեցող անձը, ապա չհատուցվող գումարը կկազմի ապահովագրական գումարի 2%-ը, բայց ոչ պակաս քան 100,000 ՀՀ դրամ, իսկ 6 ամսից մինչև 2 տարի վարորդական փորձի դեպքում՝ ապահովագրական գումարի 3%-ը, բայց ոչ պակաս, քան 150,000 ՀՀ դրամ:
- ü Ապահովագրություն չի տրամադրվում վեց ամսից պակաս վարորդական փորձ ունեցող վարորդներին
- ü Գողության դեպքում չհատուցվող գումարը կազմում է ապահովագրական գումարի 5%-ը եթե առկա է հակաառեւանգիչ սարքավորում, հակառակ դեպքում՝ 10%

Անհրաժեշտ փաստաթղթեր

Ավտոմեքենայի ապահովագրության պայմանագիրը ձևակերպելու համար անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը

- ü Ապահովադրի անձնագրի պատճեն
- ü Սեփականատիրոջ անձնագրի պատճեն, եթե սեփականատերը ապահովադիրը չէ
- ü Լիազորված վարորդների անձնագրերը և վարորդական իրավունքները
- ü Մեքենայի տեխնիկական անձնագրի պատճեն
- ü Մեքենայի գնահատման ակտի, հաշիվ-ապրանքագրի կամ առքուվաճառքի պայմանագրի պատճեն (առկայության դեպքում):
Հակառակ դեպքում հիմք է ընդունվում մեքենայի շուկայական արժեքը

Պայմանագրի ստորագրումից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԲԸ աշխատակիցները կկապվեն Ձեզ հետ և կկազմակերպեն Ձեր մեքենայի գնումը: Ապահովագրության պայմանագիրն ուժի մեջ է մտնում միայն գնման անցկացումից հետո:

Կարևոր նշում

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն հանդիսանում է ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԲԸ-ի ապահովագրական գործակալ և ներկայացնում է ապահովագրական ծառայությունը ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԲԸ-ի անունից և վերջինիս կողմից սահմանված պայմաններով: Ապահովագրական հատուցում վճարելու պահանջները ենթակա են ներկայացման ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԲԸ-ին: «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն որևէ պատասխանատվություն չի կրում ապահովագրական հատուցումների վճարման հետ կապված:

Ապահովագրական ծառայությունների լրացուցիչ պայմաններին ծանոթանալու համար այցելեք www.ingoarmenia.am:

¹ Ապահովագրությունը տրամադրվում է միայն Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ կողմից տրամադրված ավտոմեքենայի վարկով ձեռքբերված ավտոմեքենաների համար:

Թարմացվել է՝ 18/01/2019 15:00